ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի 3.5. և 3.6. ենթակետերի, ՀՀ փաստաբանների պալատի Երիտասարդական խորհրդի 20.06.2017թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված աշխատասենյակից օգտվելու ընթացակարգի 2-րդ կետի պահաջներով,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդը

ՈՐՈՇԵՑ՝

1. 2017 թվականի հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածում Աշխատասենյակից օգտվելու համար ընդունել հայտեր՝ սույն որոշումը հրապարակելու օրվանից մինչև 2017 թվականի հունիսի 27-ը ներառյալ:
2. Սահմանել, որ՝
   1) Աշխատասենյակից օգտվելու հայտերն ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10:00-ից մինչև 17:00-ը ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ հասցեում.
   2) Հարցազրույցը կանցկացվի ՀՀ, ք. Երևան Զաքիյան 2 հասցեում (ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ հասցեում) **2017 թվականի հունիսի 29-ին, ժամը 11.00-ին:**
   3) հայտերը կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային փոստով (ստորագրված և սկանավորված տարբերակով):
   4) փոստով ուղարկված հայտերը չեն համարվի ընդունված, եթե ՀՀ փաստաբանների պալատը ծրարը փաստացի ստանա 2017թ. հունիսի 27-ից հետո.
3. Հաստատել Աշխատասենյակից օգտվելու համար հայտի ձևը՝ համաձայն թիվ հավելվածի:
4. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին առաջարկել՝

- Հայտերի ընդունման վերաբերյալ հայտարարությունը տեղադրել ՀՀ փաստաբանների պալատի ինտերնետային կայքէջում.
- օժանդակել Երիտասարդական խորհրդին հայտերի ընդունման հարցում, այդ թվում՝ ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
երիտասարդական խորհրդի նախագահ՝ Ինեսսա Պետրոսյան
21 հունիսի 2017թ.
թիվ 2-Լ
ք.Երևան

21 հունիսի 2017թ.
թիվ 2-Լ

Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի
21.06.2017թ. թիվ 2-Լ որոշման

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդին

_____
_____ից
(անուն, ազգանուն)

արտոնագրի № _____,
տրված՝_____

հասցե՝
_____

էլեկտրոնային փոստի հասցե՝

_____
_____

«_____» հունիսի 2017թ.

ՀԱՅՏ

Սույնով հայտնում եմ, որ ցանկանում եմ օգտվել Աշխատասենյակից:

Մասնագիտական ուղղվածությունը՝
_____
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)

Նախկին աշխատանքային գործունեության իրականացման վերաբերյալ տեղեկություն[1]՝_____

Գիտական և/կամ մանկավարժական բնագավառում աշխատանքային գործունեություն իրականացնելու վերաբերյալ տեղեկատվություն[2]՝_____

Հայտնում եմ, որ՝
- որևէ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ չեմ գտնվում,
- չունեմ աշխատասենյակ:
-համաձայն եմ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված Երիտասարդ

[1] պետք է նշվի ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական աշխատանքային գործունեության մասին

[2] Նշվում է գործատու(ներ)ի վերաբերյալ տեղեկություն, մասնավորապես՝ գործատու(ներ)ի տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը), աշխատաժամանակի տևողությունը

փաստաբանների աջակցման ծրագրով և ՀՀ փաստաբանների պալատի Երիտասարդական խորհրդի 20.06.2017թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված աշխատասենյակից օգտվելու ընթացակարգով սահմանված դրույթների հետ:

- համաձայն եմ անվճար իրավաբանական օգնություն տրամադրել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրով և ՀՀ փաստաբանների պալատի Երիտասարդական խորհրդի 20.06.2017թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված աշխատասենյակից օգտվելու ընթացակարգով սահմանված նվազագույն քանակով:

Դիմող՝ _____

(ստորագրություն)